

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ,
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԻՍԿՈՒՐՍԻՎ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

Սոնա Մխիթարյան

Բանալի բառեր Արևելյան գործընկերություն, Եվրոպական միություն, Եվրոպական հարևանության քաղաքականություն, Եվրախորհրդարան, «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողով:

Արևելյան գործընկերության (ԱԷԳ) ծրագրի մեկնարկը դրվել է 2009թ. մայիսի 7-ին՝ Պրահայի գագաթնաժողովի ընթացքում: Ծրագրի մասնակիցներն են ԵՄ անդամ երկրները և Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան, Մոլդովան և Բելառուսը, որը, սակայն, 2021թ. ամռանը դադարեցնում է իր անդամակցությունը: Ծրագրի նախաձեռնումը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Առաջին հերթին, Հարավային Կովկասում և Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող իրադարձություններն իրենց ազդեցությունն են թողնում ԵՄ-ի վրա, ինչպես նաև՝ ԱԷԳ որոշ անդամ երկրներ ԵՄ-ի համար դարձել են սահմանակից, ինչով և պայմանավորված է ԵՄ հետաքրքրվածությունը նրանց կայունությամբ և զարգացմամբ [1]: Ինչպես նշվում է վերոնշյալ գագաթնաժողովի ընթացքում ընդունված հռչակագրում, «Արևելյան գործընկերության գլխավոր նպատակն է՝ ստեղծել պայմաններ, որոնք անհրաժեշտ են քաղաքական միասնության ընթացքն արագացնելու համար ու Եվրամիության և շահագրգռված գործընկեր երկրների միջև ապագա տնտեսական ինտեգրացիայի համար: ԵՄ քաղաքականությունը գործընկեր երկրների հանդեպ վճռապես կամրապնդի՝ հատուկ արևելյան հարևանության եվրոպական քաղաքականության չափման օգնությամբ: Այդ նպատակին հասնելու համար Արևելյան գործընկերությունը կծգտի աջակցել գործընկեր երկրներում քաղաքական և տնտեսա-հասարակական բարեփոխմանը՝ ղյուրացնելով Եվրամիության հետ մերձեցումը: Դա ժառայում է ընդհանուր ինտեգրմանը՝ ի օգուտ կայունության, անվտանգության և Եվրամիության, գործընկեր պետությունների բարեկեցության, իսկ իրականում՝ ամբողջ Եվրոպական մայրցամաքի» [2]: Սակայն արդեն իսկ 2013թ. Վիլնյուսի գագաթնաժողովի ընթացքում մեծ հարված է հասցվում ԱԷԳ ծրագրին, երբ Ուկրաինան հրաժարվում է Անցացման համաձայնագրից և այս ձևով առաջ բերում ծրագրի կառուցողական վերափոխման հրամայականը:

Հետագա տարիների ԱԷԳ առաջնահերթություններն ամրագրվում են 2015թ. Ռիգայի գագաթնաժողովի ընթացքում ընդունված հռչակագրում: Միևնույն ժամանակ, գագաթնաժողովն ի ցույց դրեց ԱԷԳ անդամ երկրների ծրագրի շրջանակներում որդեգրված տարբեր ռազմավարությունները: Ակներև դարձավ ԱԷԳ տարածաշրջանում արևմտամետ կողմնորոշում ունեցող երկրների՝ Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի հետ ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացման միտումներն Անցացման համաձայնագրերի շրջանակներում: Այդպիսով, նկատելի է դառնում ծրագրում տեխնոկրատական մոտեցման նվազեցումը և ԵՄ-ի կողմից ԱԷԳ անդամ երկրների պահանջների և տարածաշրջանային իրականությունների հետ հաշվի նստելը: Չնայած Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի հետ Անցացման համաձայնագրերի կնքումը համարվում է մեծ ձեռքբերում, այնուամենայնիվ Ռիգայի գագաթնաժողովը ցույց տվեց, որ տվյալ երկրների հետ հարաբերությունների զարգացմանն ուղղված հստակ քաղաքական

* Հոդվածն ընդունվել է 08.10.21:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանը: 12.10.21:

ազդանշանների, ինչպես նաև ԵՄ անդամակցության հեռանկարի բացակայությունը կարող է թուլացնել ԵՄ-ի ազդեցությունը վերոնշյալ երկրներում [3]:

Այժմ ծրագրի հնգամյա ընթացքը վերլուծելիս Եվրոխորհրդարանի արտաքին հարաբերությունների գլխավոր վարչությունն առանձնացնում է ներքոնշյալ իրադարձությունները որպես Այժմ ծրագրի ձեռքբերումներ.

- ԵՄ-Վրաստան, ԵՄ-Ռուկրաինա և ԵՄ-Մոլդովա Ասոցացման համաձայնագրերի կնքումը՝ որպես վերոնշյալ ժամանակաշրջանի ամենամեծ ձեռքբերում, միևնույն ժամանակ դրանց իրականացումը դիտարկվում է որպես հսկայական մարտահրավեր:
- ԵՄ-ի և Մոլդովայի միջև վիզայի ռեժիմի ազատականացումը: Այսպիսով, Մոլդովան դառնում է առաջին Այժմ անդամ երկիրը, որի դեպքում վերացվում է վիզայի ռեժիմը: ԵՄ-ն տվյալ երևույթը գնահատում է որպես կարևոր ազդակ Այժմ անդամ մյուս երկրների համար:
- Մոլդովայի և Ռուկրաինայի անդամակցումը ԵՄ էներգետիկ համայնքին, որն առաջին քայլն է՝ ուղղված Այժմ անդամ երկրների ինտեգրմանը ԵՄ էներգետիկ քաղաքականությանը:

Չնայած Այժմ զարգացման նախնական շրջանում առկա էին մի շարք խոչընդոտներ, ինչպիսիք էին՝ Ռուսաստանի ձևումները Այժմ երկրների վրա, Այժմ անդամ երկրների՝ ծրագրի շրջանակներում հաճախակիորեն դրսևորվող ոչ արդյունավետ գործունեությունը, ինչպես նաև՝ ԵՄ-ի՝ Այժմ տարածաշրջանում խորքային ներգրավվելու դժվարությունը, այնուամենայնիվ, վերոնշյալ ձեռքբերումները համարվում են բավարար: Որպես Այժմ ծրագրի շրջանակներում ձեռք բերված հաջողություն՝ առանձնակի շեշտ է դրվում ոչ միայն տնտեսական համագործակցության խորացման, այլ նաև ԵՄ ու Այժմ անդամ երկրների միջև քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալ և իրավական հիմքերի ամրապնդման վրա [4]:

Այնուամենայնիվ, անդրադառնալով վերոնշյալ ժամանակաշրջանում Այժմ ծրագրի շրջանակներում Հայաստանում տեղի ունեցած բարեփոխումներին, ըստ Այժմ երկրների եվրոպական ինտեգրման 2013թ. ինդեքսի՝ Հայաստանի հիմնական թերություններն էին՝ Ասոցացման համաձայնագրի մերժումը, դատախիզական բարեփոխումների անբավարար մակարդակը, ինչպես նաև՝ ԵՄ-Հայաստան երկխոսության շուրջ հանրային իրազեկման թերացումները: Չնայած ԵՄ-Հայաստան պաշտոնական երկխոսությունն ընթացել է արագ ու արդյունավետ, վերջինիս հատուկ տարրերը Հայաստանի քաղաքական և նախընտրական օրակարգի մաս չեն կազմել, կառավարության կողմից պատշաճ ձևով հանրությանը չեն ներկայացվել, ինչի հետևանքով Հայաստանի քաղաքացիները եվրոպական ինտեգրման գործընթացների շուրջ ունեն ցածր իրազեկվածության մակարդակ [5]:

Այժմ ծրագրի զարգացմանը զուգահեռ՝ ակադեմիական համայնքը կոնսենսուս է դրսևորում ծրագրի վերափոխման հրամայականի շուրջ: Բայց թե ինչպիսին պետք է լինի Այժմ տրանսֆորմացիան, հետազոտողների և քաղաքականություն մշակողների կարծիքները միանշանակ չեն: Կա կարծիք, որ ԵՄ-ն պետք է շարունակի տեխնիկական աջակցություն ցուցաբերել և նպաստել Այժմ տարածաշրջանում անկախ ԶԼՄ-ների, քաղաքացիական կայացմանը և համագործակցային զարգացման տեսլականին (Մաքս Ֆրաս) [6]: Միևնույն ժամանակ, Այժմ ծրագրի հաջող իրագործման համար առաջարկվում է այն դարձնել նվազ տեխնոկրատ և առավել քաղաքական (Յանա Կոբզովա, Լեոնիդ Լիտրա) [7]: Մյուս կողմից, վերլուծելով Այժմ անդամ երկրների վերջին տասնամյակի տնտեսական բարեփոխումների արդյունավետությունը և քաղաքացիական զարգացումն ու ներուժը, առաջարկվում է.

- համագործակցային մոտեցման կիրառում Այժմ անդամ երկրների հանդեպ,

- քաղաքական համագործակցության խորացում Մոլդովայի, Ուկրաինայի ու Վրաստանի հետ, քաղաքական երկխոսության և տարածաշրջանային համագործակցության նոր ձևաչափերի մշակում տվյալ երկրների հետ,
- ֆինանսական աջակցության համապատասխանեցում երկրի իրական կարիքներին, համագործակցության խորացում այն ոլորտներում, որոնք շոշափելի և տեսանելի արդյունքներ կբերեն տվյալ երկրների քաղաքացիների համար,
- ԵՄ-ԱլԳ հաղորդակցության կատարելագործում նոր դերակատարների ներգրավմամբ (ԲՀԿ-ներ, տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն):

2017թ. Բրյուսելյան գազաթնաժողովի ընթացքում ԵՄ-ն ու ԱլԳ անդամ երկրները հավանություն են տալիս ԱլԳ ծրագրի նոր հավակնոտ օրակարգին՝ 20 թիրախային արդյունքներ 2020թ. համար [8]: Նույն թվականին ստորագրվում է ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որն ուժի մեջ մտավ 2021թ. մարտի 1-ից: «Մեր՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այնպիսի պահի, երբ Հայաստանը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև՝ հաղորդելով ուժեղ ազդակ առ այն, որ ԵՄ-ն և Հայաստանը հավատարիմ են ժողովրդավարական սկզբունքներին և օրենքի գերակայությանը, ինչպես նաև՝ բարեփոխումների ավելի լայն օրակարգին: Համաձայնագրի նպատակն է՝ քաղաքական, տնտեսական, առևտրի ոլորտային ուղղություններով նպաստել Հայաստանի բարեփոխումների օրակարգի հետ կապված մարտահրավերների հաղթահարմանը և մարդկանց կյանքում մտցնել դրական փոփոխություններ», - նշել է Եվրոպական միության Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ջոզեպ Բորելը [9]:

Ըստ Նիդերլանդների միջազգային հարաբերությունների ինստիտուտի (Clingendael Institute) հրապարակած զեկույցի՝ ԵՄ-ն ԱլԳ ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության կիրառման հանդեպ անհետևողական է գտնվել: Որոշ դեպքերում ԵՄ-ն, օգտագործելով քաղաքական և ֆինանսական աջակցության մեխանիզմներ, փորձել է համագործակցել ԱլԳ անդամ երկրների կառավարությունների հետ և աչք է փակել տվյալ երկրներում բարեփոխումների իրականացման առաջընթացի բացակայության վրա: Նման դեպքերում, ԵՄ-ն հաճախ գերազնահատել է այդ երկրների եվրոպական հավակնությունները և անտեսել նրանց իրական շահերը, Ռուսաստանի հետ նրանց կապերի մասշտաբները և բարեփոխումներ իրագործելու ցածր մոտիվացիան [10]:

ԱլԳ վերջին շրջանի անվտանգային մարտահրավերները, հատկապես՝ 44-օրյա Արցախյան պատերազմը, կրկին հետազոտողների և քաղաքականություն մշակողների ուշադրությունը հրավիրեցին ԱլԳ քաղաքականության անվտանգային բաղադրիչի, ավելի կոնկրետ՝ դրա բացակայության վրա: ԱլԳ ծրագրի ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմանի հարաբերությունների զարգացման բաղադրիչը չի ներառում այնպիսի գործիքակազմ, որը կարող է համապատասխան կերպով անդրադառնալ տարածաշրջանի անվտանգային մարտահրավերներին: Ըստ «Եվրոպական հարևանության խորհուրդ» ուղեղային կենտրոնի վերլուծաբան և քաղաքական տնտեսագիտության դասախոս Պ. Մանոլիի՝ ԱլԳ ծրագրում անվտանգային հայեցակերպի ներառումը, ինչպիսիք են անվտանգային և հիբրիդային պատերազմներին հակազդող բարեփոխումները, կարող են ծրագրին շեղել սոցիալ-տնտեսական ոլորտում արձանագրված քիչ, բայց և հաջողված բարեփոխումների ուղուց: Միևնույն ժամանակ, անվտանգային մարտահրավերների անտեսումը, ԱլԳ տարածաշրջանը դարձնում է խոցելի և սահմանափակում ծրագրի ներուժը: Առաջարկվում է ընդլայնել կառուցվածքային բարեփոխումների օրակարգը՝ զուգահեռ իրականացնելով անվտանգային երկխոսություն ԱլԳ անդամ երկրների հետ՝ ՆԱՏՕ-ԵՄ ընդլայնված համագործակցության համատեքստում [11]: Գ.Գրեսսելը, անդրադառնալով ԱլԳ ծրագրի շրջանակներում ԵՄ-ի կողմից անվ-

տանգային ոլորտի անտեսմանը, ուշադրություն է հրավիրում ոչ միայն ԵՄ-ի չմասնակցությանը պաշտպանության ոլորտի բարեփոխումներում, այլ նաև թերի կամ ընդհանրապես չներգրավմանը կիբերանվտանգության, ֆինանսական անվտանգության, անդամ երկրների հետախուզական ծառայությունների հետ համապարփակ համագործակցության հարցերում [12]:

Կանխատեսվում է, որ ԵՄ-ի կողմից համապատասխան խթանների բացակայությունը, ինչպիսիք էին՝ նախկինում վիզայի ռեժիմի ազատականացումը, Ասոցացման համաձայնագրերն և մուտքը ԵՄ միասնական շուկա, Ալ Գ հետագա զարգացման ամենադժվար մարտահրավերներից մեկն է լինելու: Վերջինս կարող է պատճառ դառնալ, որ ոչ միայն ԵՄ հաստատությունների ու անդամ երկրների, այլ նաև Ալ Գ անդամ երկրների ու հասարակությունների համար ծրագիրը դառնա նվազ գրավիչ: Երկարաժամկետ տեսլականի բացակայությունը կարող է վանել եվրոպամետ տրամադրությունները և թուլացնել բարեփոխումների օրակարգը [13]: Այսպիսով, խթանների բացակայությունը վտանգում է բարեփոխումների ընթացքն, ու վերջիններիս իրականացումը դառնում է կախյալ Ալ Գ անդամ երկրների իշխանությունների քաղաքական կամքից:

Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների բաժնի կողմից մշակված գեկույցի համաձայն՝ Ալ Գ ծրագրի տասնամյա ընթացքը ցույց է տալիս, որ մի շարք մարտահրավերներ դեռ հաղթահարված չեն: Առաջին հերթին, անդամ երկրների միջև առկա տարբերությունները՝ պայմանավորված աշխարհաքաղաքական և տնտեսական իրողություններով և հարաբերությունների խորացման պատրաստակամությամբ, տվյալ ժամանակահատվածի ընթացքում շատ չեն փոխվել: Երկրորդ հերթին, Ալ Գ անդամ երկրների քաղաքական համակարգերը, որոնք բնութագրելի են ավտորիտար կառավարման բաղադրիչների և թույլ պետական ինստիտուտների առկայությամբ, խոչընդոտում են կառավարման բարելավման, օրենսդրական և դատաիրավական մի շարք բարեփոխումների կիրարկմանը: Երրորդ, Ալ Գ անդամ երկրների տնտեսությունը դեռևս տուժում է օլիգարխների անհարկի ազդեցությունից և կոռուպցիայից, որն էլ իր ազդեցությունն է թողնում ծրագրի շրջանակներում տնտեսական մի շարք բարեփոխումների արդյունավետության վրա [14]:

2020թ. մարտի 18-ին Եվրոպական խորհրդարանի, Եվրոխորհրդի, Եվրոպական տնտեսական ու սոցիալական հանձնաժողովի և շրջանների հանձնաժողովի կողմից հրապարակվում է «Արևելյան գործընկերությունը 2020թ-ից հետո» համատեղ փաստաթուղթը, որը սահմանում է ծրագրի երկարաժամկետ նպատակներն ու թիրախ բնագավառները: Փաստաթղթում առանձնացված են այնպիսի համագործակցության ոլորտներ, ինչպիսիք են՝ կառավարումը, օրենքի գերակայությունը, կոռուպցիայի դեմ պայքարը, անկախ լրատվամիջոցների ու քաղհասարակության զարգացումը, էներգետիկ, տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտները [15]: Ըստ Ի. Կորոստելևայի՝ Ալ Գ ծրագրի շուրջ տվյալ փաստաթղթում թեկուզև անդրադարձ է կատարվում այնպիսի կարևոր հասկացության, ինչպիսին է անդամ երկրների տարբերակումը՝ ըստ առաջնահերթությունների և գործողությունների, այնուամենայնիվ՝ տվյալ մոտեցման հաջողությունը կախված է գործողությունների իրականացումից և ընտրված համագործակցության մեխանիզմից: Մյուս կողմից, նա նկատում է այն գզուշավորությունը, որը դրսևորում է ԵՄ-ն, Ալ Գ ծրագրի ապագա առաջնահերթությունները նշելով՝ անդրադարձ չկատարելով տարածաշրջանում մյուս կարևոր դերակատարներին (մասնավորապես Ռուսաստանին և Չինաստանին) և վերջիններիս ազդեցությանը Ալ Գ ծրագրի վրա [16]:

Այժմ անդրադառնանք ծրագրի խորհրդարանական բաղադրիչին: «Եվրանես» խորհրդարանական վեհաժողովն Ալ Գ ծրագրի խորհրդարանական բաղադրիչն է, որը ձևավորվել է 2011 թ. մայիսի 3-ին Բրյուսելում: Հաթախի հիմնական նպատակն Ալ Գ անդամ երկրների և եվրոխորհրդարանականների միջև շփումների խորացումն է, քաղ-

հասարակության ակտիվ ներգրավումը և մշակույթային երկխոսության խթանումը [17]: Հարկ է նշել, որ Բելառուսի խորհրդարանականները երբեք «Եվրանեսթ»-ի մաս չեն կազմել: «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովը շատ անգամներ դիտարկվում է որպես ԱլԳ անդամ երկրների միջև առկա խնդիրների բարձրաձայնման և բախման, քան թե ԱլԳ անդամ երկրների և եվրոխորհրդարանականների միջև համագործակցությունը խորացնելու հարթակ:

Նկատելի է, որ ԱլԳ անդամ երկրների խորհրդարանականներն ինտենսիվորեն օգտագործում են «Եվրանեսթ» խՎ-ն՝ իրենց ազգային և կուսակցական շահերն առաջ մղելու նպատակով՝ «Աղբրեջանցիները օգտագործում են «Եվրանեսթ» խՎ-ն Լեռնային Ղարաբաղի հարցով հանրայնորեն Հայաստանի վրա հարձակվելու համար: Վրացիները բարձրաձայնում են իրենց մտավախությունները Հարավային Օսիայի և Աբխազիայի շուրջ: Ուկրաինայի ընդդիմադիր կուսակցություններն օրակարգ են բերում նախկին վարչապետ Տիմոշենկոյի կալանավորումը...» [18]: Չնայած մի շարք ինստիտուցիոնալ թերություններին՝ վերոնշյալ խորհրդարանական հարթակը կարևոր դեր է խաղում Եվրոխորհրդարանի և ԱլԳ անդամ երկրների պատգամավորների միջև համագործակցության և ֆորմալ ու ոչ ֆորմալ կապերի հաստատման, սոցիալիզացիայի և ԱլԳ ծրագրի շուրջ խորքային քննարկումների խթանման համար: Բնականաբար բոլոր պատվիրակությունները միևնույն ձևով չեն գործում «Եվրանեսթ»-ում. ըստ Ի. Պետրովայի՝ պատվիրակությունների տարբեր գործելաձևի ու մոտեցումների պատճառը կարող է լինել նրանց քաղաքական և գաղափարախոսական դիրքորոշումների միջև տարբերությունները: Օրինակ՝ նկատելի են եվրոպացի աջ կենտրոնամետ և ձախ կենտրոնամետ կուսակցությունների ԱլԳ զարգացման շուրջ դիրքորոշումների ու «Եվրանեսթ» խՎ-ում ծավալած գործունեության տարբերությունները [19]: Նույնը նկատելի է ԱլԳ անդամ երկրների պատվիրակությունների իշխանական և ընդդիմադիր պատգամավորների գործելաձևի պարագայում:

ԱլԳ անդամ երկրների հետ քաղաքական երկխոսության համատեքստում «Եվրանեսթ»-ը միակ հարթակը չէ, որտեղ եվրոխորհրդարանականները գործունեություն են ծավալում: Եվրոխորհրդարանն իր փափուկ ուժը կիրառում է նաև այլ գործիքակազմի միջոցով, որը հատկապես նկատելի է Ուկրաինայի պարագայում՝ այնտեղ անցկացնելով ընտրությունների դիտորդական առաքելություններ, ժան Մոնե երկխոսության շրջանակներում կազմակերպելով ամենամյա խորհրդատվություններ և այլն [20]:

Տվյալ ժամանակաշրջանում ԱլԳ անդամ երկրների կուսակցությունները ոչ միայն փորձում են համագործակցության ձևաչափեր փնտրել եվրոխորհրդարանականների հետ մի շարք խորհրդարանական հարթակներում, այլ կապեր են հաստատում՝ օգտագործելով արտախորհրդարանական համագործակցության մեխանիզմները: Օրինակ՝ 2012 թ. Հայաստանի Հանրապետական կուսակցությունը դառնում է Եվրոպական ժողովրդական կուսակցության անդամ: Կուսակցությունը ստանում է դիտորդ անդամի կարգավիճակ, որը ոչ Եվրամիության անդամ երկրների համար միակ կարգավիճակն է [21]:

Հետաքրքիր է նաև անդրադառնալ ԵՄ-ի դիսկուրսին ԱլԳ ծրագրի շրջանակներում: Լ. Միկայելավան ու Մ. Նյումանը, համեմատելով ԵՄ-ի և Ռուսաստանի Արևելյան գործընկերության ծրագրի ֆրեյմինգը վերջիններիս դիսկուրսում, ԵՄ-ի՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսը բաժանում են երկու խմբի՝

1. ԱլԳ-ն Պրահայի գագաթնաժողովից (2009) մինչ Վիլնյուսի գագաթնաժողով (2013)՝ ներկայացված որպես քաղաքական-տնտեսական նախաձեռնություն:

Տվյալ շրջանի դիսկուրսում բացակայում է որևէ անդրադարձ ծրագրին՝ որպես տարածաշրջանային կոնֆլիկտների կարգավորման հարթակ, ինչպես նաև՝ անդրա-

դարձ չի կատարվում որևէ երրորդ կողմին՝ որպես պոտենցիալ գործընկեր: Այնուամենայնիվ, ԵՄ դիսկուրսում տվյալ ժամանակահատվածի ընթացքում նկատվում են փոփոխություններ, երբ հաղորդակցության նյութերում սկսվում է հաճախակի շեշտվել խոր հիմքերով ժողովրդավարության հայեցակարգը: Հարկ է հավելել, որ ըստ Ե. Եֆիմենկոյի՝ Պրահայի և Վիլնյուսի գագաթնաժողովների միջանկյալ չորս տարիների ընթացքում Ալ Գ դիսկուրսիվ ռազմավարության մեջ կտրուկ աճում են արդիական բարեփոխումների վրա շեշտադրումները, ինչպես նաև կոնսոլիդացիայի և կառավարելիության գաղափարների շեշտադրումը՝ որպես Ալ Գ ծրագրի կարևոր բաղադրիչներ: ԵՄ-ի որպես ժողովրդավարության առաջխաղացման դերակատարի ներկայացման, դիսկուրսիվ ռազմավարության նպատակն է ԵՄ-ում և տարածաշրջանում եվրոպականացման կողմնակից դերակատարների համախմբումը և Ալ Գ ծրագրի աջակցումը [22]:

2. Սկսած Վիլնյուսի գագաթնաժողովից (2013) Ալ Գ-ն որպես աշխարհաքաղաքական ծրագիր:

Վիլնյուսի գագաթնաժողովից հետո առաջ է գալիս ուկրաինական ճգնաժամը, որը նկատելիորեն ազդում է Ալ Գ քաղաքականության վրա: Քաղաքականության փոփոխությունը նաև ազդեցություն է թողնում ծրագրի դիսկուրսիվ հայեցակերպի վրա: Ծրագրի՝ որպես քաղաքական-տնտեսական նախաձեռնության ֆրեյմինգը արդեն ԵՄ դիսկուրսում այդքան հաճախ տեղ չի գտնում: ԵՄ-ն Ալ Գ ծրագրի արդյունքները քննարկելիս այլևս չի անդրադառնում դրա միայն քաղաքական, տնտեսական կողմերին, դիսկուրսում նկատելի են դառնում նախորդ տարիներին բացակայող տարածքային ամբողջականության և ինքնիշխանության հայեցակարգերը [22]:

Ինչ վերաբերում է «Եվրանեսթ» ԽՎ-ում արժարժված դիսկուրսին, Մ. Հուշան, ուսումնասիրելով 2011-2019թթ. ընթացքում «Եվրանեսթ» ԽՎ-ի ընդունած բանաձևերը, պնդում է, որ մեծ մասամբ քաղաքական հարցերին վերաբերող բանաձևերն ընդհանրական բնույթ ունեն: Բանաձևերի լեզուն և թեմատիկան առաջին հերթին արտահայտում են ԵՄ-ի առաջնահերթությունները, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումները: Եթե առաջին ընդունված բանաձևը վերաբերում էր մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը, ապա 2018թ. ընդունված բանաձևում կենտրոնական դեր է խաղում Արևելյան հարևանության տարածաշրջանում դիմադրողականության հայեցակարգը: Տվյալ տերմինը փոխառված է 2016թ. ԵՄ գլոբալ ռազմավարությունից և անուղղակիորեն վերաբերում է տարածաշրջանում Ռուսաստանի դերին: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «Եվրանեսթ» ԽՎ-ում առկա դիսկուրսը մեծամասամբ արտացոլում է միայն ԵՄ մոտեցումները [23]:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, նշենք, որ Ալ Գ տարածաշրջանային ծրագիրն ունեցել է ինչպես մի շարք ձեռքբերումներ, այնպես էլ՝ նկատելի ծախսողումներ: Ծրագրի զարգացմանը զուգահեռ ակնհայտ են դառնում աշխարհաքաղաքական և ներքաղաքական իրողությունների ազդեցությունը ծրագրի արդյունավետ իմպլեմենտացիայի վրա: Մինևոյն ժամանակ ակնհայտ են դառնում ինչպես ԵՄ-ի, այնպես էլ անհատապես յուրաքանչյուր Ալ Գ անդամ երկրի՝ ծրագրի հանդեպ հետաքրքրության տարբեր դրդապատճառները և ակնկալիքները: Սակայն ակադեմիական համայնքը միակարծիք չէ ծրագրի հետագա զարգացման տեսլականի շուրջ: Վերոնշյալ մի շարք հետազոտողներ առաջարկում են ծրագրին զարկ տալ՝ խթանելով և քաղաքական ազդակներ ուղարկելով ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրեր ստորագրած անդամներին, մյուսները կարծում են, որ տարածաշրջանային ծրագրի տրանսֆորմացիան պետք է լինի ավելի խորքային և ընդգրկի Ալ Գ անդամ երկրների բոլոր տեղական դերակատարներին:

Առանձնացնենք «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովը՝ որպես ԵՄ և Ալ Գ մասնակից երկրների քաղաքական կուսակցությունների անդամների համագործակցությունն զարգացնող հարթակ: Կարող ենք պնդել, որ «Եվրանեսթ»-ը հանդիսանում է

ԱլԳ ծրագրի անդամ երկրների պատգամավորների սոցիալիզացիայի, տեղեկատվության և դիրքորոշումների փոխանակման կարևոր հարթակ, սակայն, հաշվի առնելով, որ այն օգտագործվում է շատ դեպքերում կուսակցական և ազգային շահերի առաջխաղացման համար, դեռևս այն չի կարող համարվել ԱլԳ օրակարգի խթանիչ մեխանիզմ: Միևնույն ժամանակ, «Եվրամեսթ»-ի առանձնահատկություններից կարող ենք շեշտադրել այն հանգամանքը, որ հարթակում ընդունված բանաձևերի մեծամասնությունն ավելի շատ արտահայտում են ԵՄ-ի տեսակետը, քան ԵՄ-ԱլԳ անդամ երկրների ընդհանուր տեսլականները: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ ԱլԳ անդամ երկրների մասնակցությունը «Եվրամեսթ» ԽՎ-ում բարենպաստ է անդրադառնում միջխորհրդարանական մշակույթի և Եվրոխորհրդարանի հետ կապերի զարգացման վրա:

Նկատում ենք, որ ԱլԳ տարածաշրջանի կուսակցությունները, ծրագրի զարգացմանը զուգահեռ, կարողացել են խորացնել հարաբերությունները համաեվրոպական կուսակցությունների հետ և օգտագործել միջկուսակցական համագործակցության ֆորմալ և ոչ ֆորմալ ուղիները: Հայաստանյան կուսակցությունները նույնպես բացառություն չեն կազմում, չնայած որ համաեվրոպական կուսակցությունների հետ վերջիններիս համագործակցությունը դեռևս համապարփակ ձևով ուսումնասիրված չէ:

Ի վերջո, անդրադառնալով ծրագրի դիսկուրսիվ կողմին, նկատում ենք, որ, ԱլԳ զարգացմանը զուգահեռ, այն նույնպես փոխվել է: Սկզբնական շրջանի ժողովրդավարության վրա շեշտադրումները որոշակիորեն իրենց տեղն են գիջել ինքնիշխանության հայեցակարգի շեշտադրմանը: ԵՄ-ի՝ ԱլԳ-ի շուրջ դիսկուրսը հստակորեն սահմանում է իր ակնկալիքները ծրագրի մասնակիցներից, միաժամանակ այն բավականին ձկուն է և հնարավորություններ է ընձեռում նոր քաղաքականությունների մշակման համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. N. Galstyan, Chapter: The South Caucasus in the context of security policy of European Union, EU'S foreign and security policy in the South Caucasus (A. Ghazinyan (Ed.)), Centre of European Law and Integration, 2010, p. 37.
2. Պրահայում Արևելյան գործընկերության գազաթնաժողովի ժամանակ ընդունված ընդհանուր հռչակագիր, էջ 6, http://oide.sejm.gov.pl/oide/images/leksykon/deklaracja_praska_orm.pdf.
3. E. Knot, "Following the Riga summit, more realism is required over what the EU can offer its eastern partners", The London School of Economics and Political Science, Blog post, 2015, Retrieved 6 October 2021 from <https://blogs.lse.ac.uk/euoppblog/2015/06/01/following-the-riga-summit-more-realism-is-required-over-what-the-eu-can-offer-its-eastern-partners/>.
4. A. Kruglashov, Eastern Partnership vis-à-vis challenges and doubts, Studia I Analizy Nauk O Polityce, (1) 2020, p. 69.
5. European Integration index 2013 for Eastern Partnership Countries, 2013 p. 51, Retrieved 20 September 2021 from https://eap-csf.eu/wp-content/uploads/European-Integration-Index_2013.pdf
6. M. Fras, "Weak but stable: The future of the EU's Eastern Partnership ahead of the 2017 summit", The London School of Economics and Political Science, Blog post, 17 November 2017, Retrieved October 2021 <https://blogs.lse.ac.uk/euoppblog/2017/11/17/eastern-partnership-summit-2017-weak-but-stable/>.
7. Sydoruk, T., & Tyshchenko, D., A Review of the Eastern Partnership after Ten Years: The Need to Reconsider its Efficacy, Studia Politica: Romanian Political Science Review, 18(2), 2018, p. 21.

8. Eastern Partnership, 20 Deliverables for 2020: Bringing tangible results for the citizens <https://www.consilium.europa.eu/media/44362/20-deliverables-for-2020.pdf>.
9. ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը մտնում է ուժի մեջ, 2021, shorturl.at/mCUV6.
10. B. Deen, W. Zweers and I. van Loon, The Eastern Partnership” Three Dilemmas in a time of troubles, Clingendael Report, 2021, p. 23, Retrieved 3 August 2021 from the-eastern-partnership.pdf (clingendael.org).
11. P. Manoli, The Eastern Partnership beyond Summitry, European Neighborhood Council Analysis, 2021, p. 7-8, Retrieved 20 June 2021 from <http://www.encouncil.org/wp-content/uploads/2021/03/FINAL-ENC-Analysis-Panagiota-Manoli.pdf>.
12. G. Gressel, Promoting European strategic sovereignty in the Eastern neighborhood, Policy Brief, European Council on Foreign relations, 2020, p. 9-10, Retrieved 30 May 2021 from [Promoting European strategic sovereignty in the eastern neighbourhood – European Council on Foreign Relations](http://Promoting_European_strategic_sovereignty_in_the_eastern_neighbourhood_-_European_Council_on_Foreign_Relations) (ecfr.eu).
13. A. Bendarzsevszki et al, Eastern Partnership 2030 trends, Visegrad Insight, 2019, p. 7, Retrieved 12 December 2020 from EaP-2030-Trends.pdf (visegradinsight.eu).
14. M. Damen, How Eastern Partnership countries develop their economy, governance and identity in a geopolitical context, Study, Directorate General for External Policies of the Union, European Parliament, 2019, p. 38
15. Joint communication to the European parliament, the European council, the council, the European economic and social committee and the committee of the regions, Eastern Partnership policy beyond 2020: Reinforcing resilience - an Eastern partnership that delivers for all, 2020, Retrieved on 3 October 2021 from 1_en_act_part1_v6.pdf (europa.eu).
16. E. Korosteleva, I. Petrova and I. Merheim-Eyre, The Eastern Partnership 3.0: Change or Continuity? Blog post, 2020, Retrieved on 4 September 2021 from [The Eastern Partnership 3.0: Change or Continuity? | The Dahrendorf Forum](http://The_Eastern_Partnership_3.0:_Change_or_Continuity?|_The_Dahrendorf_Forum) (dahrendorf-forum.eu).
17. The European Neighborhood Policy, <https://www.europarl.europa.eu/factsheets/en/sheet/170/the-european-neighbourhood-policy>
18. H. Kostanyan, and B. Vandecasteele, The Euronest Parliamentary Assembly: The European Parliament as a Socializer of its Counterparts in the EU’s Eastern Neighborhood?, The European Parliament and its International Relations (S. Stavridis and D. Irrera (Eds.)), Routledge, 2015, p. 227-232.
19. Irina Petrova, 'Euronest: What Drives Inter-Parliamentary Cooperation in the Eastern Partnership?', European Foreign Affairs Review, Issue 21(1), 2016, p. 53.
20. M. Gahler, Boosting the EU’s soft power in Eastern Partnership Countries, European View 20 (1), 2021, p. 17-18.
21. ՀՀ-ն Եվրոպայի ժողովրդական կուսակցության քաղաքական ընտանիքի անդամ, <http://www.hhk.am/hy/news/item/2012/02/09/EPP/>.
22. Е. Ефименко, Реформаторский дискурс «Восточного партнёрства» Европейского союза: 2009–2013 гг., Вестник Омского университета. Серия «Исторические науки». Т. 8, № 1 (29), 2021, стр. 99-100.
23. L.Mikalayeva and M. Neuman, European Union’s institutional discourse on the Eastern Partnership Discourse and its reception in Russia, University of Freiburg and University of Groningen, 2019, pp. 8-10.
24. M. Hushcha, European Parliament and the Eastern Partnership: challenges and opportunities in the term, UA: Ukraine Analytica 3 (17), 2019, p. 19.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արևելյան գործընկերության ծրագրի զարգացման քաղաքական, խորհրդարանական և դիսկուրսիվ ասպեկտների շուրջ
Սոնա Մխիթարյան

Հոդվածը նվիրված է ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի ձևավորման և զարգացման գործընթացին: Հոդվածում քննության են ենթարկվել Արևելյան գործընկերության ծրագրի ձեռքբերումներն ու ձախողումները, ծրագրի շրջանակներում ձևավորված «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի դերը, ինչպես նաև՝ ծրագրի շուրջ ԵՄ-ի դիսկուրսը: Չնայած վերոնշյալ ծրագիրը գրանցել է մի շարք հաջողություններ, ինչպիսիք են՝ ԵՄ-ԱլԳ անդամ երկրների հարաբերությունների խորացումը, որոշ անդամ երկրների հետ Ասոցացման համաձայնագրերի կնքումը և անդամ երկրներում բարեփոխումների խթանումը, այնուամենայնիվ, նկատելի են ծրագրի մի շարք թերացումներ և ձախողումներ: Ակնհայտ է աշխարհաքաղաքական և ներքաղաքական իրողությունների ուղղակի ազդեցությունը ծրագրի իմպլեմենտացիայի վրա: Վերջինս արտացոլվել է նաև ԵՄ-ի՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսում, որտեղ, բացի ժողովրդավարության հայեցակարգից, սկսել է շեշտադրվել նաև ինքնիշխանության հայեցակարգը: Քննության արդյունքում նաև տեսնում ենք, որ «Եվրանեսթ» ԽՎ-ն չնայած որ նպաստել է եվրոխորհրդարանականների և ԱլԳ անդամ երկրների պատգամավորների միջև ֆորմալ և ոչ ֆորմալ համագործակցության ամրապնդմանը, այնուամենայնիվ, այն մեծամասամբ օգտագործվում է ոչ թե ԱլԳ ծրագիրը խթանելու, այլ՝ կուսակցական և ազգային շահերի առաջխաղացումն ապահովելու համար:

РЕЗЮМЕ

О политических, парламентских и дискурсивных аспектах развития инициативы
Восточного партнерства
Сона Мхитарян

Ключевые слова: Восточное партнерство, Европейский союз, Европейская политика соседства, Европейский парламент, Парламентская ассамблея “Евронест”.

Статья посвящена процессу формирования и развития Восточного партнерства. В статье исследуются достижения и неудачи инициативы Восточного партнерства, роль Парламентской ассамблеи “Евронест” в рамках программы, а также дискурс ЕС о инициативе. Хотя инициатива Восточного партнерства имела ряд успехов, таких как углубление отношений ЕС-стран ВП, подписание соглашений об ассоциации с некоторыми странами-членами, содействие реформам в странах-членах ВП, все еще есть ряд недостатков и неудач инициативы. Очевидно прямое влияние геополитических и внутривнутриполитических реалий на имплементацию инициативы. Последнее также нашло отражение в дискурсе ЕС об инициативе «Восточное партнерство», где, помимо демократии, особое внимание стало уделяться концепции суверенитета. В результате исследования стало ясно, что хотя ПА «Евронест» способствовала формальному и неформальному сотрудничеству между депутатами Европарламента и государств-членов ВП, ассамблея в основном используется не для улучшения программы ВП, а для обеспечения продвижения партийных и национальных интересов.

SUMMARY

On the Political, Parliamentary and Discursive Aspects of the Development of the Eastern Partnership Program
Sona Mkhitaryan

Keywords: Eastern Partnership, European Union, European neighbourhood policy, European Parliament, “Euronest” Parliamentary Assembly.

The article is devoted to the formation and development process of the Eastern Partnership program. The article examines the achievements and failures of the Eastern Partnership program, the role of the Euronest Parliamentary Assembly formed in the framework of the program, as well as the EU discourse on the program. Although the program has had several successes, such as the deepening of EU-EaP member states relations, the signing of Association Agreements with some EaP member states, the promotion of reforms in the EaP member states, there are still several shortcomings and failures in the program. The direct influence of geopolitical and internal political realities on the implementation of the program is obvious. The latter was also reflected in the EU discourse on the EaP program, where in addition to democracy, the concept of sovereignty was started to be emphasized. As a result of the examination, it can be stated that although the “Euronest” PA has contributed to the strengthening of formal and informal cooperation between the Members of the European Parliament and parliaments of the EaP member states, it is largely not used to promote the EaP program, but to ensure the advancement of party and national interests.